

1619

Ա. Արևութեական

ԱՄՐՈՒԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ  
ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

9(38)

U - 51

ԳԻՏԱՑՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ

1937



2 SEP 2006

ՀԽԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ MAY 2011

№ 3 ՀԵՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

9(38)

0-51

ար.

Ա. ՄԻՆԳԱԼԵՎԻԶ

Հ Օ Տ  
41733  
1040

## ԱՏՐՈՒԿՈՒՅԹԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

(Ոժանդակ Ցուցանիշ Բնուակայողներին)

Թարգմ. Մ. ԶԱԳԱՐՅՈՒՆ  
Խմբագիր՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ  
Մրգագիշ՝ Ա. ՇԱԼՋՅԱՆ

Գիտեատրի տպարան  
Գլավլիս № 2242  
Պատվեր № 28  
Տիրած 1000



## ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՄ

1.

Բնորոշելով անտիկ ստրկությունը, մարքսիզմ—լենինիզմի հիմնադիրները բացահայտել են վոչ միայն վերջինիս տնտեսական քնությունը, այլև նրա սոցիալական եյությունը, սահմանելով, վոր անտիկ ստրկությունն-անտիկ աշխարհի հիմնական արտադրող դասակարգերի դասակարգային կեղեքման միջոցն եւ «Հին ասիական և կլասիկ ժամանակներում, —գրում եր Ենգելսը, —դասակարգային կեղեքման գերակշռող ձևը ստրկությունն եր, այսինքն՝ վոչ այնքան հողի եքսպրուզիացիան մասսաներից, վորքան նրանց անձնավորությունների եքսպրուզիացիան»<sup>1</sup>:

«Անտիկ պետությունը, —գրում եր նա մի այլ տեղ, —գերազանցապես ստրկատերերի պետություն եր ստրուկների հնագանդեցման համար»<sup>2</sup>: Անտիկ աշխարհի հիմնական հակամարտությունն ստրուկների ու ստրկատերերի հակամարտությունն եր, վորը նրա զարգացման պրոցեսում դառնում ե ստրուկների ու ազատների հակամարտություն: Հունական համայնքներում այս հակամարտությունն աճում եր ստրկության աճման գուգընթաց, ստրկական աշխատանքի անընդհատ մեծացող շահագործման գուգընթաց: Ենգելսը բավական պարզորոշ սրա ներկայությունը հավաստել ե Աթենքում VI—V դ.դ. «Դասակարգերի հակադրությունը, վոր այժմ գտնվում ե հասարակական և քաղաքական հիմնարկների հիմքում, անցնում եր արդեն վոչ թե աղնվազարմ և հասարակ ժողովրդի, այլ՝ ստրուկների և ազատների, իրավագուրկների և քաղաքացիների միջև»<sup>3</sup>:

<sup>1</sup> Ենգելս—«Բանվոր դասակարգի դրաւթյունն Անգլիայում», էջ 48, 1928 թ.:

<sup>2</sup> Ենգելս—«Հնատանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 202 Մոսկվա, 1933:

<sup>3</sup> Ենգելս—«Հնատանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 144:

Այս հիմնական հակամարտության զարգացումն արտահայտվում եր ստրուկների ու ստրկատերերի միջև մղվող դասակարգացմին պայքարի զանազան ձևերով—մի պայքար, վոր առանձնապես սուր եր V և հետագա դարերում: Այս պայքարում արդեն կային այն գծերը, վորոնք նրան բնորոշում եյին իբրև բողոք ստրկատիրական սիստեմի դեմ, բայց Հունաստանում նրանք բավական թույլ եյին արտահայտվում: Այսուղի պայքարը մղվում եր անկազմակերպ և մեծ մասամբ առանձին բոնկումների բնույթ եր կրում ստրկատիրոջ սպանություն, նրա գույքի այրում, դործիքների ջարդում և այլն: Ստրուկների կողեկտիվ յելույթները, մասսայական կազմակերպված պայքարը դեռևս լայն թափ չեր ստացել Հունաստանում:

Շահագործման լժիգեմ ստրուկների բողոքի ձևերից մեկն եյին հանդիսանում ստրուկների բավական հաճախակի փախուստները: Ստրուկներն իրենց տերերից փախչում եյին մենակ և ամբողջ խմբերով: Ստրուկների փախուստ ամենից շատ տեղի յեր ունենում պատերազմների ժամանակ: Վոչ միայն այն պատճառով, վոր յերկրի ներքին կյանքի մեջ վորոշ կազմալուծում մտցնող պատերազմը հեշտացնում եր փախուստը, այլև այն պատճառով, վոր պատերազմը մեծ սպառնալիք եր ստեղծում ստրուկների կյանքի համար. յեթե թշնամիները վերցնում եյին վորեն քաղաք, ապա նրանք, իբրև կանոն, առաջին հերթին կոտորում եյին քաղաքը պաշտպանող ստրուկներին. յեթե ստրուկները չեյին մասնակցում ուղմական գործողություններին, նրանց ծախում եյին իբրև ավար. յեթե քաղաքի պաշտպանը ձգձգվում եր և պարենը չեր բավականացնում, ստրուկներին կոտորում եյին իբրև ավելորդ ուտողների: Ահա թե ինչու Հունաստանում պատերազմները սովորաբար զուգորդվում եյին ստրուկների փախուստով: Սա այնքան սովորական յերևույթ եր, վոր կովող կողմերը, որինակ՝ աթենացիք ու սպարտացիք պելուսներյան պատերազմի զինադադարի ժամանակ (423 թ.) պայմանագրի մեջ հատուկ վերապահում արեցին, վորը կողմերին պարտավորեցնում եր չընդունել պատերազմի ժամանակ փախած ստրուկներին<sup>1</sup>: Բայց չնայած սրան՝ հետագայում, պելուպոնեսյան պատերազմի ժամանակ բազմից փախել են ստրուկները: Այսպես, Նիկոսը գանգատում եր, վոր 414 թ. Սիրակուզի մոտ գործող աթենաստավորը կողմերի ժամանակակալություն հայտնի է:

<sup>1</sup> Թուլիդիտես, IV գիրք, 118 գլ., 7:

Կան նավատորմի նավերից վախան թիավարող ստրուկները, նավատորմը զրկելով ուղմական գործողությունները շարունակելու հնարավորությունից<sup>1</sup>: 413 թ., Դեկալիյի մոտ աթենական բանակի ջարդվելու ժամանակ «ամբողջ տերիտորիան գրավված եր աթենացիներից, ավելի քան քսան հազար ստրուկ անցավ թշնամու կողմը, այս թվում նաև շատ արհեստավորները, վորպիսի հանգամանքը ծանր հարված եր աթենական արդյունաբերության համար, վորը պատերազմի պայմաններում պահանջում եր լարված աշխատանքը: Թուլիդիտեսը հաղորդում ե նույն պելուպոնեսյան պատերազմի ժամանակի ստրուկների փախուստի մի փաստ ել. 412 թ., յերբ Քիոսն անցավ աթենացիների ձեռքը, դաժան հալածանքների յենթարկվող ստրուկներն անցան աթենացիներին և նրանց մի շարք տեղեկություններ տվին այստեղի մասին, վորտեղ մղվում եր պատերազմը, «մեծագույն մշաս պատճառելով քիոսցիներին»<sup>2</sup>:

Ստրուկները փախչում եյին նաև խաղաղ ժամանակ և կոնֆլիկտներ առաջացնում հունական առանձին պետությունների միջև: Այսպես, 433—432 թ. (մեր թվակ. առաջ) աթենացիների ու մեծարացիների կոնֆլիկտը, վոր առաջացել եր այն բանի հետեւ կանքով, վոր մեծարացիք իրենց մոտ ապաստան եյին տվել Աթենացից փախած ստրուկներին, պելուպոնեսյան պատերազմի առիթներից մեկն եր<sup>3</sup>:

III դ. սկզբի արձանագրություններից մեկը պատմում ե, վոր իոս կղզու ստրուկները փորձեցին փախչել և թաքնվեցին ափի մոտ կանգնած անտախտակամած նավի մեջ, բայց նկատվեցին: Նավահրամանատար Զենոնը, վոր այս ժամանակ զեկավարն եր Կիկլադյան կղզիների միության, վորի մեջ մտնում եր Իոս կղզին, հավաքեց նավապետներին, այսպես կոչված տրիերարխներին, քննեց այս միջադեպը և փախած ստրուկներին հետ դարձրեց: Սրա համար «խորհուրդը և ժողովուրդը վորոշեցին չնորհակալություն հայտնել Զենոնին»<sup>4</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, VII գիրք, 13 գլ. 2.

<sup>2</sup> Նույն տեղում, 27 գլ.

<sup>3</sup> Նույն տեղում, VIII գիրք, 40 գլ. 2.

<sup>4</sup> Նույն տեղում I գիրք, 139 գլ. 2.

<sup>5</sup> Արտադրության անտիկ յեղանակն աղբյուրներում (Ասպի)<sup>6</sup> № 69 Հրատ. Գայմկ-ի, 1933.

Հայտնի յեն դեպքեր, յերբ ստրուկները փախել են և թաք-  
նըլիեր տերերից կողոպտելով գույքը։ Հելենական թեզիպտոսի  
(III դ.) մի գավերագիր հաղորդում ե ստրուկ խոհարարի փախչելու  
մասին, վորն իր հետ տարել ե ձիերի կեր գնելու համար նրան  
տրված պղնձա 80 դրամ։ ստրուկը թաքնվել եր կապագով-  
կիական զինվորների ճամբարում, և ստրկատերը կազմակերպեց  
նրա վորոնումը<sup>1</sup>։ Համանման փաստերի ճամբարում ե հելե-  
նական Յեզիրապտոսի (II դ.) մի այլ գավերագիր. մի վոնս ստրուկ  
չերմոն, վոր պատկանում եր ալարանդյան գետականին Ալեքսանդ-  
րիայում, «փախավ 3 մինի վոսկեդրամով և 10 մարդարիտով»։  
հենց այստեղ ել հաղորդվում ե, վոր Հերմոնի հետ միասին փախել  
ե և մի ուրիշ ստրուկ՝ թիոնը, վոր պատկանում եր պալատական-  
ներից մեկին՝ Կալիկլատին. ստրուկը «փախավ, տանելով թիկ-  
նոց, ստրկի վերնազգեստ և կանացի սրվակ, վոր արժե 6 տա-  
ղանտ, և 5 հազար պղնձա դրամմա»<sup>2</sup>։

Վորչափով, վոր ստրուկների փախուստը նյութական վաս  
եր պատճառում ստրկատերերին և կազմականութում նրանց տնտե-  
սությունը, ստրկատիրական պետությունն որենքի ուժով պաշտ-  
պանում և պահպանում եր իր շահերը։ Այսպես, աթենական որե-  
նըսդրությունը փախած ստրկի վերաբերմբ թույլ եր տալիս կի-  
րառել այսպես կոչված պագոպե, վորի համաձայն փախած ստրկին,  
իբրև ծանր հանցագործի, ամեն մի քաղաքացի կարող եր բռնել  
առանց վորես ձեւականություն պահպանելու և հասցնել ստրկա-  
վայրը։ Այս իրավունքի հիման վրա՝ կազմակերպվում եյին փա-  
խած ստրուկների վորոնումներ։ Պետության այս ակտիվ միջա-  
մտությունն ստրկատերերի շահերի պաշտպանության գործին  
հանդիսանում ե մի գիծ, վոր առաջին հերթին բղխում ե իր իսկ  
անտիկ պետության սպեցիֆիկ առանձնահատկություններից։  
Անտիկ պետությունը հանգես եր գալիս ի պաշտպանություն  
ստրկատերերի շահերի վոչ միայն այն պատճառով, վոր նա նրանց  
դասակարգային կազմակերպությունն եր, այլև այն պատճառով,  
վոր ստրուկները, վորոնք յուրաքանչյուր առանձին ստրկատիրոջ  
մասնավոր սեփականությունն եյին, նմանապես և սեփականու-  
թյունն եյին պետության անտիկ համայնքի համար։

Անտիկ սեփականության, այս թվում նաև ստրուկների

կատմամբ՝ սեփականության բնությունն այսպես են վորոշել  
մարքսիզմի հիմնադիրները. «Պետության քաղաքացիները միայն  
միասնաբար են տիրում իրենց աշխատող ստրուկներին և հենց  
այս պատճառով ել կապված են հանրային սեփականության ձեռվ։  
Սա պետության ակտիվ քաղաքացիների միատեղ մասնավոր սե-  
փականությունն ե, վորոնք ստրկած են ստրուկների հանդեպ  
պահպանելու ասսոցիացիայի այս բնականորեն առաջացած ձեր»<sup>1</sup>։

Անտիկ Հունաստանի իրավագոր քաղաքացիները—սա ամե-  
նից առաջ ստրկատերերի համայնքն ե. նրա քաղաքական արտա-  
հայտությունը հանդիսանում ե պոլիսը (քաղաք-պետություն), վոր  
ներկայացնում ե ստրուկներին միատեղ շահագործող և ազատնե-  
րին աղքատացնող ստրկատերերի կողեկտիվ։ Այս պայմաններում  
«հանրային սեփականության կողքին զարգանում ե արդեն նաև  
շարժական, իսկ հետագայում և անշարժ մասնավոր սեփականու-  
թյունը, բայց իրեն նորմայից շեղվող և հանրային սեփականու-  
թյանը յենթակա ձև»<sup>2</sup>։

Մասնավոր սեփականություն, այս թվում նաև ստրուկների  
նկատմամբ մասնավոր սեփականության գոյությունը հանրային,  
պետական սեփականության շրջանակներում ըստ կեյության Նշա-  
նակում եր, վոր անտիկ ժամանակների պայմաններում ստրկա-  
տերերի շահերն, իբրև դասակարգի, գերիշխում են մասնավոր շա-  
հերի վրա։ Այս տեսակետը շատ հատակ ձևակերպել ե Պլատոնը.  
«Դուք (քաղաքացիներ) ինքներդ ձեզ չեք պատկանում, և այս  
գույքն ել ձեզ չի պատկանում. ներկայիս ամբողջ սերունդը և նրա  
սեփականությունը պատկանում են ձեր նախորդների և ձեզ հա-  
ջորդող սերունդների ամբողջությանը, և ել ավելին՝ պետությանը»<sup>3</sup>։  
Յեկ այնուհետև Պլատոնն ընդգծում ե, վոր որենսպրությունը  
պետք ե յուրաքանչյուր առանձին քաղաքացու շահերը յենթարկի  
այն բոլոր քաղաքացիների ամբողջությանը, վորոնց շահերն ար-  
տահայտում ե պետությունը»

## 2

Ստրուկներ մատակարարում եյին պատերազմները, վորոնք  
սպասարկում եյին ստրկատերերին։ Հունական պետություններում,

<sup>1</sup> Կ. Մարքս յեկ Ֆ. Ենգելս. Յերկեր IV հ., եջ 12. 1933.

<sup>2</sup> Նույն տեղում.

<sup>3</sup> Պլատոն—«Որենքներ» II գլ. 923.

<sup>1</sup> Ասպի, № 71

<sup>2</sup> Ասպի № 72.

մասնավորապես Աթենքում, ստրկատիրական բանակի հիմնական կոչումն այն եր, վոր «Աթենական դեմոկրատիայի ժողովրդական գորքը հանդիսանում եր արիստոկրատական զինված ուժ ընդդեմ ստրուկների և նրանց պահում եր սահմանադաշտ<sup>1</sup>:

Ստրկատիրական համայնք—պետությունն, ստրուկների այդ կոլեկտիվ տերը, մշտապես յեռանդով պայքարում եր ստրուկների ամեն մի փորձի գեմ խախտելու կամ սասանելու ստրկատիրական հասարակության ուժը։ Պետության այս դերը, իբրև մի ուժի, վոր հնազանդության մեջ եր պահում ստրուկներին, պարզ ըմբռնում եր Պլատոնը. հատկապես նա նշեց, վոր բավականաչափ ստրուկներ ունեցող ստրկատերն իրեն անվտանգ կարող ե զգալ բացառապես այն պատճառով, վոր նրան պաշտպանություն ե ցույց տալիս պետությունը, վոր յեթե չլիներ այս պաշտպանությունը, նա հավիտենական յերկուղի մեջ պիտի ապրեր ստրուկների հանդեպ<sup>2</sup>:

Ենք հիրավի, յուղաքանչյուր ստրկատեր ստրուկների գեմ պայքարելիս կարող եր հույս դնել վոչ միայն ուրիշ ստրկատերերի, այլև ազատ քաղաքացիների ամբողջ կոլեկտիվի, համայնք—պետության ոգնության վրա։

Այս պատճառով ել ստրուկներին վորոնելու հոգաց, իբրև կանոն, հանդիսանում եր վոչ միայն իրենց իսկ ստրկատերերի գործը. փախած ստրուկներին վորոնելու գործին ներդրավվում եր տեղական ազմինիստրացիան. վերև հիշատակված ստրուկներ Հերմոնի և Բիոնի վորոնմանը մասնակցում եր հունական ազմինիստրացիան. ստրուկների վորոնումը ղեկավարում եր տեղական աստիճանավոր Ստրատոնը։

Փախած ստրուկների վորոնումը սովորաբար այսպես եր կազմակերպվում. նամակներ եյին ուղարկվում, հաղորդելով ըստ-ըուկի փախչելու մասին, նշվում եյին նրա արտաքին նշանները և պարզեց եր խոստացվում նրան, ով կդառնի և կվերադարձնի փախածին կամ ծայրահեղ դեպքում ցույց կտա, թե վորտեղ ե գըտնվում նա: Հերմոն ստրկի փախչելու վիրաբերյալ նամակում հաղորդվում ե, վոր նա «Ճնշված ե Սիրիայում Բամբիկում, 18 տարեկան ե, միջին հասակի, անմորուք, ամուր սրնքամսերով, կզակը փոսիկով, քթից ձախ խալ ունի և բերնի ձախ անկյունից վերև՝

<sup>1</sup> Ենգելս—«Բնատանիքի, մասնավոր սեփականության և պետության ծառումը», եջ 201, 1933:

<sup>2</sup> Պատոն—«Պետություն» 9 գլ. 578.

սպի, ձախ վերնադաստակը դրոշմված յերկու բարբարոսական տառերով<sup>3</sup>:

Ստրկին մատնում եր նրա մարմնի դրոշմը, իսկ յերբեմն ել վղով պատած ողը, վոր համարյա անկարելի յեր իր ձեռքով հանել:

Ստրկի վորոնումը և նրան տիրոջ վերադարձնելը վերջինից պահանջում եյին վորոշ ծախքեր. փախած ստրկին տեղ հասցնելու համար, իբրև կանոն պետք եր վարձատրել լրտեսին, ինչպես և նրանց, ովքեր ցույց են տվել ստրկի ապաստարանը: Քսենոֆոնն այսպիսի բնորոշ դիալոգ ունի:

«—Ասա, Դիոդոր, յեթե քո ստրուկներից վորեւ մեկը փախչի, դու միջոցներ ձեռք կառնես նրան վերադարձնելու։

—Յերդպում եմ Զեսովկուրիշներից ել կինդրեմ, հայտնելով, վոր պարգև կտամա»<sup>4</sup>:

Հիշատակված յերկու ստրուկներ Հերմոնի ու Բիոնի վորոնման համար ստրկատերերը խոստացան վարձատրել այսպես. ոով նրան (Հերմոնին) վերադարձնի, կստանա 3 պղնձե տաղանտ, ոով ցույց կտա, վոր նա գտնվում ե տաճարում,—2 տաղանտ, ով ցույց կտա, վոր նա գտնվում ե վճարունակ և դատի համար մատչելի մարդու մոտ,—5 տաղանտ»<sup>5</sup>: Նույնպիսի վարձատրություն եր սահմանված ստրուկ Բիոնի վորոնման համար:

Վոստիկետե փախած ստրկին տիրոջը հանձնելու համար վարձատրություն ստանալու պրակտիկան սովորական բան դարձավ ստրկատիրական հասարակության կյանքում, հրապարակ յեկան հատուկ անձնավորություններ, վորոնք զբաղվում եյին փախած ստրուկներ վորսալով և սրանով ապրուստ եյին ձեռք բերում: Հելլենական դարաշրջանի (III դ.) մի աստիճանավորի ղեկույցից յերեւում ե, վոր յերկու յեղբայր՝ Կոլլոխուտ և Զահեղիլ, բռնել են փախած ստրուկների և նրանց հանձնելու համար պահանջում են 100 դրամ արծաթ<sup>6</sup>: Նույն վավերագրի հետագա տեքստից յերեւում ե, վոր նշված անձինք դրա հետ միասին յեղել են և ստրկավաճառներ, վորոնք գործադրել են ստրուկներով սպեկուլյացիա անելու հետևյալ յեղանակները. Զահեղիլ ստրուկներ եր վաճա-

<sup>1</sup> Ասու, № 72

<sup>2</sup> Քսենոֆոն—«Հիշողություններ Սոկրատի մասին». II գիրք, 10 գլ. 1—2, Կիև. 1889:

<sup>3</sup> Ասու № 72.

<sup>4</sup> Նույն տեղում

ոռւմ, նրանք փախչում եյին, իսկ Կոլլոխուտն իր մոտ թաքցնում եր փախած ստրուկներին, վորպեսզի հետո նրանց համար փրկարգին ստանա: Հունաստանում ստրուկ վորսացող հատուկ մասնագետները կոչվում եյին դրապետագոգներ, այսինքն փախած ըստրուկ բերողներ: Նրանց մեջ կային այնպիսիները, վորոնք փախած ստրուկներ վորսալու վրա նայում եյին, իրոք մի գործի, վորն ուղղված եղեալի ստրկատիրական հասարակակարգի հիմքերի ամրացումը: Այսպիսի մարդկանց ծառայությունները նշվում եյին կառավարական հատուկ շնորհագրերով: Այսպես, IV դ. Աթենքում քարե ստելլի վրա կանգնեցված եր պատվո գիր ի պատիվ մի քաղաքացու իոս կղզուց, վորն զբաղվում եր աթենական փախած ստրուկներ վորսալով և նրանց ստրկատերերին հանձնելով: Իոս կղզու ստրկատերերը ջնորհակալություն հայտնեցին նավագետ Զենոնին (III դ.) նրա համար, վոր նա իրենց վերադրեց նրա նավում թաքնվել ցանկացած փախած ստրուկներին: Այս մասին կառավարության վորոշումը նույնպես քանդակված եր քարե ստելլի վրա<sup>2</sup>:

Հետապնդումներից փրկված փախած ստրուկը կարող եր ժամանակագորապես ապաստանել վորոշ տաճարներում, վորոնք հանդիսանում եյին այսպես ասած պայմանական ապաստարան թաքնված ստրկի համար: Ապաստարանի իրավունք, այսպես կոչված ոսիլիի իրավունք վայելում եյին շատ տաճարներ. Գորտինի տաճարը, Կրետեյի տաճարը, Թիֆեոսի տաճարն Աթենքում, Ապոլոնի տաճարը Դելֆիում, Կանոպի տաճարը, ներքին Յեղիպտոսի և այլն: Մի քանի տաճարներում նույնիսկ հատուկ շենքեր եյին շինված փախած ստրուկների համար, վորտեղ նրանք ապրում եյին, մինչև վոր սովը չեր քշում այնտեղից, կամ մինչեւ վոր քուրմը չեր վճռում փախած ստրկի բախտը:

Տաճարում ապաստանեն ստրկին փաստորեն չեր պաշտպանում հալածանքներից: Տաճարը նրանց համար ստրկությունից ազատվելու հնարավորություն ել չեր տալիս: Կրետե կղզու որենը սրբական հուշարձանը, այսպես կոչված գորտինյան որենքն ստանձնում եր փախած ստրկի միայն ժամանակավոր պաշտպանությունը. նա արգելում եր ստրուկ վաճառելն այն ժամանակ, յերբ նա թաքնված ետաճարի ապաստարանում, փախուստից մի

<sup>1</sup> «Известия ГАИМК», № 101, № 135—136. 1934,

<sup>2</sup> Аспи, № 69.

տարի հետո: Ուրիշ դեպքերում տաճարում ժամանակավոր ապաստան գտած ստրուկը՝ աամարից պաշտպանություն չեր ստանում. այստեղ ստրկի բախտը կախված եր քուրմից, նա յեր վճռում՝ ստրկին տալ իր տիրոջը, թե հանձնել ուրիշի: Տաճարում թաքնվելու վորձ արած փախած ստրուկը կրկին դատապարտվում եր ստրկական կյանքի:

Ստրուկների փախուստաները հանդիսանում եյին ստրկատերի դեմ պայքարելու պասսիվ ձևերից մեկը, ստրուկների անկազմակերպվածության ցուցանիշը: Բայց ստրուկների փախուստաներն անտիկ Հունաստանի պատմության մեջ կարևոր դեր եյին խաղում այն սեսակետից, վոր նրանք քայքայում եյին մտցնում ստրկատիրական տնտեսության մեջ, իսկ պատերազմների ժամանակ քաղաքական լուրջ վտանգ եյին ներկայացնում հունական պետությունների համար:

Դասակարգային պայքարի ավելի գործուն ձեզ հանդիսանում եյին ստրուկների ապստամբությունները: Ճիշտ ե, Հունաստանում նրանք այնպիսի լայն թափ չստացան, ինչպես Հումում II—I դարերում: Հունաստանում ստրուկների ապստամբություններն իրոք մասսայական բողոքի կողեկտիվ ձև ընդդեմ տնտեսության ստրկատիրական սիստեմի և ստրկատիրական հասարակակարգի՝ չզարգացան և հունական ապստամբությունների մակարդակին չհասան: Վերն ե սրա պատճառը:

Այս հարցի խորհրդային հետազոտողներից մեկը՝ Պրոֆ. Կրյուլերը, գտնում եր, վոր Հունաստանում ստրուկների շարժման թուլության հիմնական բացատրությունը հունական արդյունաբերության առանձնահատկությունների մեջ եւ նա գտնում եր, վոր անտիկ արտադրության վիճակը, վորն ըստ եյության մանր եր, քիչ քանակությամբ ստրուկներ ուներ, ձեռնարկություններում չեյին կենտրոնացած ստրուկների բավականաչափ մասսաներ, անհրաժեշտ նախադրյաներ չեր սաեղծում ստրուկների շարժման զարգացման համար. մյուս կողմից՝ Հունաստանի զյուղատնտեսության համար ել բնորոշ չեն ստրկական խողոր լատիֆունդիաները. այնտեղ գերիշխում եր մանր հողատիրությունը<sup>1</sup>:

Բայց Կրյուլերի այս դատողություններն ամենակին չեն համապատասխանում փաստերին, հետևաբար, վոչինչ չեն բացատրում քննարկվող հարցում: Սխալ ե այն բանը, թե V—IV դ. դ.

<sup>1</sup> „Известия ГАИМК“, № 101, № 122 և հետեւալները, 1934.

ստրուկները բավականաչափ չեյին կուտակված Հունաստանի առաջավոր պետությունների արդյունաբերության մեջ։ Հայտնի յե, վոր գեռես IV դ., նախասոլոնյան ժամանակաշրջանում, պարտքերի դիմաց ստրկացումն արդեն մասսայական բնույթ եր կրում<sup>1</sup>։ Հայտնի յե, վոր Աստիկայում, Լավրիոնի հանքերում աշխատում եյին հազարավոր ստրուկներ<sup>2</sup>։ Հունական պետություններում կային արհեստանոցներ, վորտեղ աշխատում եյին հարյուրից պելի ստրուկներ (Լիսիի վահանների արհեստանոցը V դ., Աթենքում 120 ստրուկներով<sup>3</sup>։ Փոկիացի Մնասոնի մոտ աշխատող հազարավոր ստրուկները և ուրիշ.։)։ Հայտնի յե, վոր պելուպննեսյան պատերազմին, 413 թ., 20 հազար աթենական ստրուկ անցան.։ Սպարտայի կողմբ<sup>4</sup>. այսպիսի մասսայական յերևույթն անկարելի կլիներ, յեթե Աստիկայում մեծ թվով ստրուկներ կուտակված չլինեյին։

Բավականաչափ. համոզիչ չեն Կրյուգերի և այն դատողությունները, թե աթենական ստրուկների կյանքի համեմատաբար տանելի մակարդակը վորոշում եր նրանց անբավարար ակտիվ պայքարն ստրկատերերի դեմ։ Հաստատելով այս, Կրյուգերն ամբողջությամբ անդրադարձել եր բուրքուական պատմագիտության դիրքերն ստրկության վերաբերմամբ (Լետուրնո և ուրիշ.), վորոնք կեղծ—քսենոփոնյան «Աթենական Պոլիտիայի» (հունական գրող Քոհնոփոնին վերագրվող յերկ) մի տեղի հիման վրա, վոր վերաբերում եր աթենական ստրուկներին, ապացուցում եյին, վոր Աթենքում «շնորհիվ բարքերի մեղմության ստրուկների դրությունն առանձնապես վողբավի չեր», վոր «աթենացիների մարդասիրությունն իրենց ստրուկների վերաբերմամբ» միանգամայն տանելի յեր դարձնում ստրուկների դրությունը և այլն։ Հանրահայտնի յեն ստրուկների ամենադաժան շահագործման փաստերը Լավրիոնի աստիկական հանքերում, աթենական ստըրկատերերի խստությունն ու դաժանությունն ստրուկների վերաբերմամբ. Վալլոնը ցույց տվեց, վոր ստրուկներին ստիպում եյին

1 Պատարքու. — «Սոլոն», 8 գլ. 4. ԱՊԲ. 1881.

2 Քահնութեան. — «Յեկամուտների մասին», IV գիրք. 14 գլ.

3 Լիսի. — «Ճառեր» XII ճառ, եջ 19.

4 Թուկիդիսես. — IV գիրք, 118 գլ. 7.

5 Կեղծքսենոփոնյան «Աթենական Պոլիտիա» I գիրք. եջ 10—11:

6 Լետուրնո. — «Ստրկության եվոլյուցիան», եջ 236—238. № 1898.

աշխատել ձեռքերը շղթայակապ, վոտքերը կապանքներով, հաճախ յերկաթե վզողով։ Փախուստի փորձից հետո ստրուկներին դրոշմում եյին շիկացրած յերկաթով<sup>1</sup>։ Հայտնի յեն փաստեր, յերբ ստրուկներին դաժան տանջանքների յեն յենթարկել աթենական դատարանում և այլն։

Հունաստանի ստրկական ապատամբությունների անկազմակերպության պատճառների առթիվ կարելի յե նշել հետեւյալը, ստրուկների և ստրկատերերի հակամարտությունը դեռևս գտնվում եր հասունացման պրոցեսում, Հունաստանում այն չեր հասել այնպիսի բարձրության ու այնպիսի ուժի, վորպեսզի վերածվեր ըստրուկների մասսայական փոթորկահույզ պայքարի ընդդեմ ստըրկատերերի։ Ստրուկների ապստամբությունների մանր կրակները բռնկվում եյին Հունաստանի առանձին վայրերում՝ սկսած V դարից, բայց նրանք չեյին ձուլվում և դառնում ստրուկների ապրատամբության միասնական հրդեհ, ինչպես Հումում։

### 3

Հունաստանում ստրուկների վաղ ապստամբություններից մեկը տեղի ունեցավ Արգոսում, 494 թվականին։ Այս ապստամբությունը կազմած եր Սպարտայի կովում Արգոսի գորքի կրած պարտության հետ։ Սպարտացիք Զախջախեցին արգոսցիներին, վոչնչացրին նրանց վոչ միայն գորքը, այլև բնակչության մասսան (ազատ քաղաքացիների), և ստրուկներն ոգտվեցին այս մոմենտից ապստամբելու համար։ Սա ստրուկների հաջող ապստամբություններից մեկն եր. նրանք գրավեցին քաղաքը, գեն շգրտեցին ստրկատերերի կառավարությունը, կազմակերպեցին իրենց կառավարումը։ Հերոդոտն ուղղակի ասում ե, վոր պատերազմի հետեւանքով «Արգոս» այնքան մարդկանցից զրկվեց, վոր բոլոր գործերը մնում եյին ստրուկների իրավասության տակ, վորոնք ամեն ինչ կառավարում և տնօրինում եյին»<sup>2</sup>։ Ստրուկները գրավեցին նաև Տիրինթոս քաղաքը։ Բայց ապստամբությունը Զախջախեցից։

Սակայն ստրուկների իշխանությունը տապալելուց հետո յել Արգոսում ստրուկների շարժման սպառնալիքը չվերացավ։ Վորոշ ժամանակ անց կրկին ապստամբություն բռնկեց. ապստամբ ըստ-

1 Wallon. — «Histoire de l'esclavage dans l'antiquité». V. 1, p. 415.

2 Հերոդոտ. — VI գիրք. 83 գլ.

բուկները հարձակվեցին քաղաքի վրա. «..Նրանց միջև շատ տեղական պատերազմ ծագեց, վորից արգիվացիք հաղիվ հաղթող դուրս յեկան»<sup>1:</sup>

Ստրուկների բավական նշանակելի շարժում տեղի ունեցավ անտիկ աշխարհի ստրկատիրական խողորագույն կենտրոն Սիցիլիայում դեռևս V դարում։ Այս դարում Սիցիլիայի ստրուկների մեծաքանակ լինելու մասին մենք ունենք Դիոդորի վկայությունը, վորը նշել է հունա-կարթագենյան՝ հույների համար հաջող պատերազմի հետևանքով Սիցիլիայի հունական գաղութներում ստրուկների բավական շատանալը։ Այս պատերազմում գերիների մասսային ստրկացրին և նրանց գրավեցին մասնավոր անձինք։ Սիցիլիայի ստրուկների V դ. ապստամբությունները հանդիսացան Սիցիլիայի ստրուկների II դարի վիթխարի շարժումների նախագուշակները<sup>2</sup>։

Վազերագրով հաստատված ստրուկների առաջին ապստամբությունը տեղի ունեցավ 414 թվականին հունական Սիրակուզադաղություն: Ապստամբ ստրուկների գլուխ անցավ վոմն Սոսիստրատ: Յերբ հայտնի դարձավ ստրուկների առաջիկա յելույթի մասին, բանակցությունների համար նրանց մոտ ուղարկվեց Սիրակուզի հեծելագորի պետ Դիոմաքոսը, վոր մոտիկ հարաբերությունների մեջ եր Սոսիստրատի հետ: Կառավարության հանձնարարությամբ Դիոմաքոսը գորավար Հերմոկրատի հետ միասին բանակցություններ սկսեց Սոսիստրատի հետ 20 ստրկի ներկայությամբ: Հերմոկրատը՝ 600 հոպլիտի (ծանր զինված մարտիկ) ուղեկցությամբ հանդես յեկավ ստրուկների առջև և նրանց խոստացավ ապստամբ ստրուկներին ազատ արձակել, իսկ Սոսիստրատին գարձնել Սիրակուզի վարչակից: Ստրուկները հավատացին այս խոստումներին, բայց չարաշար խարվեցին. շարժման դեկավարները բռնվեցին և մահապատժի յենթարկվեցին, մասցածները վերադարձվեցին իրենց տերերին. ստրուկների մի մասը փախավ աթենացիների մոտ, վորոնց նավատորմն այդ ժամանակ ուղական գործողություններ եր վարում Սիցիլիայի ափերին<sup>3</sup>:

<sup>1</sup> Θηνην.— XI γήρε, 20 γι.

<sup>3</sup> Սիրակուցի ստրուկների ապահովության վերաբերյալ նյութերը տես Կրյուգերի հոդվածում: Известия ГАИМК № 101, Եջ 126—127, 1934.

Սարուկների մասսայական շարժումներ տեղի ունեցան 11  
դարում, Քիոս կղզում, վոր ստրուկների առևտություններուն եր: Այս շարժման մասին պատմել ե վոմն Նիմֆոդոր սիրակուղի, վորի աշխատությունը բավականաչափ ինտերպուցաների<sup>1</sup> յե յենթարկվել և սրա հետևանքով անստույգ շատ բան և պարունակում: Սակայն աղբյուրի հիմքում, անպայման, գտնվում ե պատմական փաստի հաղորդումը: «Քիոսցիների ըստ-րուկները, — գրում: — Նիմֆոդորը, — փախչում են իրենց տերեւրից և թաքնվում լեռներում: այստեղից նրանք բազմություն-ներով հարձակվում են մասնավոր կալվածքների վրա և թալա-նում»<sup>2</sup>: Այս փախած ստրուկներին միավորեց նրանց մեջ աչքի ընկած առաջնորդ Դրիմակը: Նրա զեկավարությամբ ստրուկները կովի մեջ մտան ստրկատերերի հետ, ընդ վորում ստրկատերերն ստիպված յեղան բանակցությունների մեջ մտնելու Դրիմակի հետ: Ստրուկները խոստացան դադարեցնել կողոպուտներն ու արշավանքներն ստրկատերերի կալվածքների վրա, իսկ Դրիմակը կազմակերպեց հատուկ դատարան ստրուկների փախչելու պատ-ճառները քննելու համար: Այսպիսով, Դրիմակը հանդես եր գալիս իրեւ միջնորդ ստրուկների և ստրկատերերի միջև: Դիմելով ստր-կատերերին, նա ասել ե: «Ճերք ձեր ստրուկները փախչեն, յես գործը կը քննեմ, և յեթե պարզվի, վոր նրանք փախել են կյանքի անտանելի պայմաններից, յես նրանց կթողնեմ ինձ մոտ: Իսկ յե-թե գանգատներն անհիմն ճանաչվեն, յես նրանց հետ կուղարկեմ աիրոջ մոտ»<sup>3</sup>: Այնուհետև Նիմֆոդորը հաղորդում ե, վոր սրանից հետո Քիոսի ստրուկների և ստրկատերերի միջև խաղաղ հարաբե-րություններ հաստատվեցին: Քիոսի մի մասում գոյություն ուներ ստրուկների պետությունը՝ Դրիմակի գլխավորությամբ: Նրա մյուս մասում՝ Դրիմակից կախված ստրկատերերի պետությունը: Բայց Դրիմակի պետությունը գասակարգային-քաղաքական ի-մաստով վոչչով չեր տարբերվում ստրկատերերի պետությունից: Նա կազմապերպված եր ըստ վերջինիս տիպի: Դրիմակը հանդի-սանում եր այս պետության անսահմանափակ կառավարիչը: «Հստ-րուկների վերաբերմամբ Դրիմակի իշխանությունը բռնապետա-կան իշխանություն եր, հենց փախած ստրուկները, վոր նրա հետ

<sup>1</sup> Խառերպոլացիս նշանակում ե արտագրողի կողմից ձեռագիրը. յերկի տեքստի մեջ հեղինակին չպատկանող լուսաբեր և ամբողջ Փրազներ մտցնելը:

Аспи, № 609

3 Аспи, № 609

Եյին, նրանից ավելի շատ եյին վախենում, քան առաջ վախենում եյին իրենց տերերից, և անում եյին ամեն բան, ինչ նրան հաճելի յեր՝ Դրիմակին յենթարկվելով իրու պետի»:<sup>1</sup>

Դրիմակի մահվանից հետո նրա ստեղծած պետությունը քայքայվեց, փախած ստրուկները կրկին նորոգեցին հարձակումները Քիոսի ստրկատերերի վրա:

Անտիկ աշխարհի պատմության մեջ յերկրորդ դարը հանդիսանում է ստրուկների փոթորկահույզ ապստամբությունների շըրջան, ապստամբություններ, վոր տեղի յեն ունեցել Հոռոմեյական պետության զանազան վայրերում, վորի կազմի մեջ այդ ժամանակ մտնում եր Հոռոմաստանը: Սիցիլիայի ստրուկների վերոհիշյալ հեղափոխության ազդեցության տակ II դարում Աստիկայում, Լավրիոնի հանքերում, իսկ հետո Դելոս կղզում, ստրուկների առելքը այս խոշորագույն կենտրոնում, տեղի յեն ունենում ստրուկների շարժումների բունկումները: Այս շարժումները ճնշվեցին: Սիցիլիայի ստրուկների յերկրորդ հեղափոխության (104—101 թթ.) ազդեցության տակ կրկին տեղի ունեցավ Լավրիոնի հանքերի ստրուկների ապստամբություն, վոր բավական նշանակելի չափեր ընդունեց: «Բազմաթիվ միջիադներով (բյուր=տաս հազար) աստիկական սարուկներ աշխատում եյին հանքերում՝ շղթայակապ... Ապստամբելով, նրանք կոտորեցին հանքերի պահակներին, տիրացան Սունիի ակրոպոլիսին և յերկար ժամանակ ամայացնում եյին Աստիկան: Սա տեղի ունեցավ Սիցիլիայի ստրուկների յերկրորդ ապստամբության շրջանում»:<sup>2</sup>

Հոռոմական ստրուկների քաղաքական ակտիվությունն արտահայտվում եր վոչ միմիայն նրանց հեղափոխական յելույթներում ընդգեմ ստրկատերերի. Հոռոմաստանում բազմից այնպիսի փաստեր են տեղի ունեցել յերբ ստրուկների շարժումները կապված են յեղել ազատների մեջ տեղի ունեցող դասակարգային պայքարի հետ: Դեռևս VI դ. վերջում, յերբ Աստիկայում տեղի յեր ունենում գեմոկրատական մասսաների պայքար տոհմային ավագանու գեմ, այս պայքարին ներդրավվել եյին նաև ստրուկները:

Հոռոմաստանի ավելի հետագա պատմությունը մեղ տալիս ենակ դեմոկրատական շարժման մեջ ստրուկների մասնակցելու մի

<sup>1</sup> Ասու № 609

<sup>2</sup> Ասու, № 609

<sup>3</sup> Ամբիոս, VI գիրք, եջ 104.

շարք փաստեց: V դարում Պլատեյայում պայքարող քաղաքական կուսակցությունները պայքարի մեջ եյին ներդրավում նաև ստրուկներին. «...Պլատեյայում ստրուկները գեմոկրատիայի կողմն են»:<sup>4</sup> Յերբ 427 թ. Կորկիրում բռնկվեց քաղաքացիական կոիվը, «...յերկու կողմերն ել լրաբերներ եյին ուղարկում շրջակա դաշտերը, իւրենց կողմը կանչելով ստրուկներին խոստանալով ազատել նրանց. ստրուկների մեծ մասը հարց ժողովրդին»:<sup>5</sup>

Բայց գեմոկրատական շարժումների և ստրուկների շարժումների կապի վերաբերյալ այս փաստերը հիմք չեն տալիս յեղանկացնելու, վոր հին Հոռոմաստանում գոյություն և ունեցել միասնական հակաստրկատիրական ճակատ. ստրուկներն այս շարժումներում հանդիսանում եյին վոչ ավելի, քան զինվորներ գերիշխող դասակարգերի ձեռքին, վորովհետև ազատների գեմոկրատական խավերի շարժումներն ուղղված չեյին ստրկատիրական հասարակակարգի դեմ:

Սակայն ստրուկների յելույթներն ստրկատերերի գեմ անկախ այն բանից, թե ինչ ձև եյին ընդունում նրանք, չեյին կարող ստրկատերերի մեջ սարսափ չներշնչել իրենց բախտի համար: Ստրուկների ապստամբությունների սպառնալիքի առընչությամբ ստրկատերերի ունեցած անհանգստությունը շատ ցայտուն արտահայտված ե Պլատոնի բազմաթիվ արտահայտումների մեջ: «Ստրուկն այնպիսի մի սեփականություն ե, վորին տեր լինելը շատ դժվարություններ ե բերում, և փորձը մի անգամ չե ցույց տվել այս», — զրում եր Պլատոնը, հենվերով ստրուկների հաճախակի ապստամբությունների և այն աղետների վրա, վոր հասնում եյին պետությանն այս ապստամբությունների հետևանքով»:

Այս նույն միտքը Պլատոնն արտահայտել ե նաև հետևյալ թեզիսով. «ԶԵ վոր ստրուկները յերեք տերերի բարեկամը չեն դառնա այնպիս, ինչպիս անպետք մարդիկ չեն դառնա կանոնավոր մարդկանց քարեկամ»:<sup>6</sup> Ուրիշ կապակցությամբ Պլատոնը գրում եր, վոր շատ ստրուկների տեր հարուստները կարող են ապրել յերկյուղ չունենալով ստրուկներից, վորովհետև նրանց պաշտպանում ե պետությունը. յեթե չինսեր այս, «ինչպիսի մեծ սար-

<sup>1</sup> Դիոգր XIX գիրք, եջ 41.

<sup>2</sup> Թուկիդիս, III գիրք, 73 գլ.

<sup>3</sup> Պլատոն. «Որենքներ», VI գիրք, եջ 777.

<sup>4</sup> Նույն տեղում, եջ 757-ա.



սակ կունենար նա : (հարուստը) իրեն, իր յերեխաների ու կուջ համար, վոր չինի թե ստրուկները կոտորեն բոլորին<sup>1</sup>:

Այս սարսափն ստրուկներից ստիպեց ստրվատերերին և ըստրկատիրական պետությանը դիմելու ստրուկների ապստամբությունները կանխելու ամենաստարբեր յեղանակների: Այսպես, IX դարում իրեւ ստրուկների շարժումների դեմ պայքարելու միջոցնույնիսկ առաջարկ եր արվում սահմանափակել ստրուկների քանակը և թույլ չտալ ստրկությունը զարգացնելու հույներին ըստրուկ գարձնելու միջոցով: Այս մտայնության ազդեցությունը չափազանց գերազնահատել են բուրժուական հետազոտողները, վորոնք գտնում եյին, վոր հունական կյանքի պրակտիկայում սրա հետևանքով շատ սահմանափակ թվով հույն ստրուկներ են յեղել: Պլատոնն ու Արիստոտելն իրոք զարգացնում եյին այն թերիան, վոր հույնը բնածին ստրկատեր ե, վոր նա իրավունք ունի տիրելու բարբարոս ստրուկներին, վոր հույներին չի կարելի ստրուկ դարձնել: Պլատոնն ուղղակի ցանկություն հայտնեց, վոր հույներն ստրուկ չդարձնեն պատերազմի ժամանակ գերի վերցրած ցեղակիցներին:

Բայց հունական պրակտիկ կյանքում այս տեսակետը շատ թույլ արտացոլում եր գտնում: Հայտնի յե, վոր հույն-պարսկական պատերազմների ժամանակ Հելոն Սիրակուզցին իրեւ ստրուկ վաճառեց մեղարացիներին և եվրեյացիներին<sup>2</sup>: Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ, 413 թ. Սիցիլիայի. Զարդից հետո հազարավոր աթենացիներ և նրանց դաշնակիցներն ստրկացվեցին<sup>3</sup>: Փիլիպոս Մակեդոնացին իրեւ ստրուկ վաճառեց ոլինթացիներին և այլն: Յեթե պատերազմի ժամանակ տեղի յեն ունեցել գերված հույներին ազատ թողնելու առանձին փաստեր, ապա սա բնավ մարդասիրական կամ ազգային բնույթի նկատառումների հետևանք չեր, այլ հետևանք եր ռազմաքաղաքական նկատառումների, սա մի մաներ եր, վոր նպատակ ուներ թշնամուն գրավել իր կողմը: Այսպես պետք է գնահատել այն փաստը, վոր պերոպոնեսյան պատերազմում, սպարտացիների կողմից Մեթիմի մոտ (Լեսրոս կողի) լեսրոսցիներին զարդելուց հետո զորավար Կալիկրատիդը լեսրոսցի հույներին իր կողմը գրավելու համար հայտարարեց, վոր հույնե-

րից վոչ վոք չի ստրկացվի, և միենույն ժամանակ նույն Կալիկրատիդն իրեւ ստրուկների վաճառեց այստեղ գրաված աթենական կայազորը<sup>4</sup>:

Բայց անվիճելի յե, վոր Պլատոնի այն դատողությունները, թե հույներն ստրուկ չպիտի լինեն, և Արիստոտելի ցուցումները, թե ստրուկն ամենից առաջ բարբարոս ե, պայմանավորված են այն սպառնալիքը հաշվի առնելով, վոր ներկայացնում եյին ըստրուկների շարժումները Հունաստանում V—IV դարերում: Հանձին հույն ստրուկների ներքին թշնամիներ չունենալու համար, վորոնք սոցիալական ավելի մեծ վտանգ եյին ներկայացնում, քան բարբարոս ստրուկները, ստրկատիրական հասարակության գաղափարախոսներն ստրկատերերին նախազգուշացնում եյին հույներին ստրկացնելուց:

Բարբարոս ստրուկների համախմբման և միատեղ յելույթների հնարավորությունը կանխելու համար առաջարկվում եր մի ազգության ստրուկներին մի տեղ չպահել: Պլատոնն ուղղակի հանձնարում ե «...միենույն ազգության ստրուկներ չունենալ, այլ վորքան հնարավոր ե, ունենալ զանազան լեզուներով խոսող ըստրուկներ, յեթե միայն ցանկալի յե, վոր նրանք ավելի լավ կրեն ստրկությունը»<sup>5</sup>: Ըստ յերեւույթին այս խորհուրդներն իրականացվում եյին հունական ստրկատիրության գործնականում: V դարի հունական արձանագրություններից մեկում թվարկվում են վոմն Կեֆիսոդորի պատկանող 16 ստրուկ, և նրանց մեջ կան տաս զանազան ազգությունների պատկանող ստրուկներ<sup>6</sup>:

Հին հունական ստրուկների շարժումների զարգացման կարեւ վորագույն փուլերի վերլուծումը թույլ ե տալիս յեղակացնելու, վոր թեև այս շարժումները լայն թափ չեն ստացել այնտեղ և փոթորկահույլ խոռվությունների չեն վերածվել ընդդեմ ստրկատերերի, նրանց նշանակությունն անտիկ աշխարհի դասակարգային պայքարի պատմության մեջ անվիճելի յե: Ստրուկների շարժումը Հունաստանում հանդիսանում եր արտադրության անտիկ յեղանակի զարգանալ սկսած ճգնաժամի ցուցանիշը: Կովելով ստրկատիրական հասարակակարգի դեմ, ապստամբության դրոշ բարձրացընելով նրա դեմ, ստրուկներն արագացրին այս համար հայտարարեց, վոր հույնե-

<sup>1</sup> Պլատոն. «Պետություն», IX գիրք, եջ 578-ա:

<sup>2</sup> Հերոդոս, VII գիրք, 156 գլ.

<sup>3</sup> Թուկիդիս. VII գիրք, 85 գլ. եջ 3—4.


<sup>1</sup> Քանենմոն. „Hellenika“. I գիրք, 6 գլ., եջ 14—16.

<sup>2</sup> Պլատոն. «Որենքներ», VI գիրք, եջ 777-օ.

<sup>3</sup> C. L. A. (Corpus Inscript. Atticorum). I հ. № 277.

գի քայլայման պրոցեսը։ Այսպիսով, ստրուկների շարժումներն որյեկտիվ կերպով ճանապարհ հարթեցին արտադրության նոր, ավելի պրոդրեսիվ յեղանակի համար, վորը պետք է գար փոխարինելու ստրկատիրականին։ Սրանումն ե ստրուկների շարժումների հսկայական պրոցրեսիվ գերը։ Նրանք հանդիսացան հեղափոխական այն պրոցեսի պատմականորեն անհրաժեշտ ողակը, վոր ձեռակերպել ե ընկեր Ստալինն իր թեզիսում։

«Ստրուկների հեղափոխությունը վերացրեց ստրկատերերին և վոչնչացրեց աշխատավորների շահագործման ստրկատիրական ձեռք»<sup>1</sup>։



<sup>1</sup> Ի. Ստալին. «Հենինիզմի հարցեր», եջ 527. Մոսկվա, 1934։

ԳԻՆՆ Ե 80 ԿՈՊ.